# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2-րդ/

**«Թաղամաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ:**

3.06.2025թ. Դիլիջան համայնք

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Դիլիջան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանը:
- Ճարտարապետ Արամ Աթոյանը:
- «Թաղամաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Դանիելյանը և նախագծի ղեկավար Արթուր Տեր-Սիմոնյանը:
- «ՍՏՈՀԱ» ճարտարապետ Լիանա Մուրադյանը:
- ՇՄԱԳ կազմող փորձագետ Տիգրան Օգանեզով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2025թ. հունիսի 3-ին ժամը 12:00-ին Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Թաղամաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ Դիլիջան համայնքում նախատեսվում է իրականացնել «Թաղամաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքներ:

Համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ

ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն փորձաքննական կենտրոնին ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև, փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցավ ՇՄԱԳ կազմող փորձագետ Տիգրան Օգանեզովը:

Հանրային լսման մասնակիցների կողմից եղան հարցադրումներ, որոնց վերաբերյալ տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ լսման մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Թաղամաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Շահումյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «ՄԱՅՐԻ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Փորձաքննական կենտրոն»

ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«Թաղամաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Արթուր Տեր-Սիմոնյան

Գյումրի քաղաքի Ճահուկյան 17/8, 17/10 և 17/17 հասցեներում «Շիրակ» բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջանակում մրցակցային կարգ ավարտման ձեռնարկման համաձայնություն վերաբերյալ առաջարկի 2-րդ մասին

Մասնակիցների ցանկ

1. Հովիկ Մկրտչյան ՃՇՀԸ 011 22.0018.
2. Գրիգոր Հովհաննիսյան ՃՇՀԸ 011220017.
3. Արման Բաղդասարյան 094 080906
4. Վահան Վարդանյան TERMOROS ARMENIA 095760001
5. Եփրեմյան Գևորգ ՍՊԸ "Բարիք-ԵԿ" 055999087
6. Գրիգորյան Գուրամ ՍՊԸ "Բարիք-ԵԿ" 099778446
7. Տիգրան Օհանյան "Վելլ Տ" ՍՊԸ 091002011
8. Արամ Արամյան «Էն-Էչ-Էյ-Զեդ» ՍՊԸ 055-700-551
9. Լևոն Մովսիսյան «ԱՏՄՀԱ» ՍՊԸ 041553502
10. Արթուր Մեր-Մարտիրոսյան «Ֆարմասի» ՍՊԸ 044800150
11. Հայկազ Սիմոնյան «Ֆարմասի» ՍՊԸ 033222272